ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/09/2021

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 19 մայիսի 2021թ.

Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի, Արամայիս Փաշինյանի, Նարեկ Համբարձումյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2021 թվականի մայիսի 19-ին քննելով ՀՀ ազգային ժողովի յոթերորդ գումարման պատգամավոր Արսեն Միխայլովի կողմից հայտարարագրման ենթակա տվյալները «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում չներկայացնելու փաստի առթիվ 2021 թվականի փետրվարի 22-ի N 10 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության լրագրող Սամսոն Մարտիրոսյանի դիմումի հիման վրա Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով վերապահված գործառույթները, պարզել է, որ ՀՀ ազգային ժողովի յոթերորդ գումարման պատգամավոր Արսեն Միխայլովի կողմից 2020 թվականի մայիսի 27-ին ներկայացրած «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում (այսուհետ՝ նաև 2019 թվականի տարեկան հայտարարագիր) «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում՝ «Բ.6-Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1. - Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում չեն ներկայացվել հայտարարագրման ենթակա տվյալներ հանդիսացող բանկային հաշիվներում առկա մնացորդները:

32

1.2 2021 թվականի փետրվարի 22-ին Արսեն Միխայլովի մասնակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 09/21 արձանագրությունը:

1.3 Հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 22-ի N 10 որոշմամբ Ազգային ժողովի յոթերորդ գումարման պատգամավոր Արսեն Միխայլովի նկատմամբ հայտարարագրման ենթակա տվյալները 2019 թվականի տարեկան հայտարարագրում չներկայացնելու փաստի առթիվ հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթ:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 2021 թվականի ապրիլի 29-ին, ինչի կապակցությամբ Արսեն Միխայլովը պատշաճ ծանուցվել է:

1.5 Հանձաժողովը 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ Ե-01/191-2021 գրությամբ Արսեն Միխայլովին առաջարկել է ներկայացնել 2019 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար , , ընկերություններում առկա իր բանկային հաշիվների քաղվածքները:

1.6 Արսեն Միխայլովը 2021 թվականի ապրիլի 29-ին Հանձնաժողովին է ներկայացրել ընկերության կողմից սպասարկվող բանկային հաշիվների վերաբերյալ քաղվածք:

II. Վարույթի մասնակցի բացատրությունը

Վարչական իրավախախտման գործի քննության վերաբերյալ Արսեն Միխայլովը պատշաճ ծանուցած է եղել, սակայն գործի քննությանը չի ներկայացել: Արսեն Միխայլովի կողմից միջնորդություն չի ներկայացվել:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/09/21 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ Արսեն Միխայլովի կողմից 2020 թվականի մայիսի 27-ին ներկայացրած «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրում «Բ.6-Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1.- Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում չեն հայտարարագրվել իր դրամական միջոցները՝ և , ընկերություններում իր անվամբ սպասարկվող բանկային հաշիվների մնացորդները՝ 2019 թվականի հունվարի 01-ի դրությամբ կազմել են ընդհանուր 907.9 ՀՀ դրամ (123.7+3+781.20), իսկ 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 217,764 ՀՀ դրամ (217,632.70+127.3+4):

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 Արսեն Միխայլովը իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի

համաձայն հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկում ունեցած), իսկ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գույքը հայտարարագրելիս նշվում են դրամական միջոցի դեպքում՝ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը, արժույթը: Դրանից բացի՝ նույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված է, որ դրամական միջոցի դեպքում տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը և արժույթը:

4.3 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.4 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.5 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.7 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ կատարվել է խախտում, այն է.

ՀՀ ազգային ժողովի յոթերորդ գումարման պատգամավոր Արսեն Միխայլովը «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրում՝ «Բ.6-Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1.- Բանկային հաշիվների

31

մնացորդներ» ենթաբաժնում անզգուշությամբ չի հայտարարագրել իր դրամական միջոցները՝ 2019 թվականի հունվարի 01-ի դրությամբ ընդհանուր 907.9 ՀՀ դրամ, իսկ 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր 217,764 ՀՀ դրամ, հետևաբար վերջինս 2019 թվականի տարեկան հայտարարագրում ներկայացրել է ոչ ամբողջական տվյալներ:

Նշված արարքը հանդիսանում է վարչական զանցանք՝ հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին պարբերությամբ սահմանված իրավակարգավորումը (հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը):

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ:

Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Սույն գործով Հանձնաժողովն արձանագրում է, որ հայտարարտուի կողմից չհայտարարագրված գումարի չափը կազմում է 2019 թվականի հունվարի 01-ի դրությամբ 907.9 ՀՀ դրամ, իսկ 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 217,764 ՀՀ դրամ, **այն չի գերազանցում պաշտոնատար անձի պաշտոնեական դրույքաչափի համար սահմանված**

աշխատավարձի զուտ չափը: Միևնույն ժամանակ Հանձնաժողովն արձանագրել է, որ հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչների ավտոմատացված ստուգման համակարգում հայտարարատուի տվյալ տարվա հայտարարագիրը նույնականացվել է որպես ոչ ռիսկային: Նշված հանգամանքները մատնանշում են, որ խախտման արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ազգային ժողովի յոթերորդ գումարման պատգամավոր Արսեն Միխայլովի կողմից կատարված խախտումը հանրային վտանգավորության տեսակետից ունի նվազ նշանակություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արսեն Միխայլովին ազատել վարչական պատասխանատվությունից՝ կատարելով բանավոր դիտողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արսեն Միխայլովին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Արսեն Միխայլովին տրամադրել 7 աշխատանքային օր՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30